

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N 1902-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՆՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

NN	Նպատակ	Միջոցառումներ	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները	Ծանոթություն
1	2	3	4	5	6
77	Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում առկա խնդիրների լուծում, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի շարունակական բարելավում և սպառողների պահանջների բավարարում	<p>77.1 Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում գործող վարձակալության պայմանագրով նախատեսված վարձատուի ու վարձակալի իրավունքների և պարտավորությունների ապահովման ուղղությամբ աշխատանքների իրականացում</p> <p>77.2 Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում</p>	<p>Բաժանորդներին մատուցվող ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունները շարունակական բարելավվել են: Վարձակալության պայմանագրով սահմանված հիմնական կատարողական ցուցանիշների (ջրամատակարարման շարունակականություն, ջրի որակ, չհաշվառված ջուր, բաժանորդների բավարարվածություն և այլն, նորմալ գործող ստանդարտներ), հնչպես նաև պայմանագրի այլ պահանջների ապահովման վերաբերյալ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականին ջրամատակարարման տևողությունը՝ (օրվա ընթացքում ջրամատակարարման ժամերի կշռված միջին տևողությունը) Երևան քաղաքում կազմել է 23,2 ժամ/օր, այլ քաղաքային համայնքներում՝ 20,9 ժամ/օր, իսկ գյուղական տարածքներում՝ 20,5 ժամ/օր: 2025 թվականին մատակարարվող ջրի որակը կազմել է 98.54%:</p> <p>2025 թվականին նախատեսվել է և իրականացվել է ՀՀ Տավուշի մարզի Բաղանիս բնակավայրի խմելու ջրի գլխամասային հանգույցի (գետային ջրընդունիչ) և</p>		

		<p>ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման գործընթացի կառավարմանն ուղղված բարեփոխումների (այդ թվում ինստիտուցիոնալ) իրականացում՝ այն ներառելով պետական լիազոր մարմնի գործառույթում</p>	<p>մաքրման կայանի կառուցման, գոյություն ունեցող ավագային մաքրման կայանի նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում: Շինարարության իրականացման համար գումար չի հատկացվել:</p>		
		<p>77.3 Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի իրականացում՝ ծառայությունների պատշաճ մակարդակի ապահովման համար</p>	<p>Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում 2025 թվականի ընթացքում շարունակվել են ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի իրականացումը: Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների պատշաճ մակարդակի ապահովման համար Ջրային կոմիտեն իր իրավասությունների շրջանակներում ներկայացրել է դիրքորոշում, անհրաժեշտության դեպքում՝ հաշվի առնելով նաև վարձակալ ընկերության կարծիքը:</p>		
		<p>77.4 «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման համար սահմանված կարգով</p>		<p>ՀՀ կառավարության 2020 թվականի օգոստոսի 27-ի «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր-Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունները «Հայջրմուղկոյուղի» փակ</p>	

		<p>լիցենզիայի տրամադրում և այդ բնագավառում գործունեության վերսկսման անհրաժեշտ պայմանների ստեղծում</p>		<p>բաժնետիրական ընկերությանը միացման ձևով վերակազմակերպելու մասին» N 1399-Ա որոշման 2-րդ կետի հանձնարարականի կատարումն ապահովելու, մասնավորապես՝ ընկերությունների վերակազմակերպման և միացման պետական գրանցումն իրականացնելու պահանջը դեռևս չի կատարվել, քանի որ պարզվել է, որ «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սեփական կապիտալը (-1,819,911.0 հազար դրամ) կազմել է բացասական թիվ:          Հետագայում Ընկերություններն ուսումնասիրություններ են իրականացրել, որի արդյունքներով հայտնաբերվել է հաշվապահական սխալ:          Համաձայն Ընկերության կողմից ներկայացված տեղեկատվության, վերոհիշյալ հաշվապահական սխալի ձևակերպման և սխալի ուղղման արդյունքներով «Շիրակ-</p>
--	--	---	--	---

				<p>ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սեփական կապիտալը կկազմի դրական մեծություն, ինչն իրավական առումով հնարավորություն կտա սկսել Ընկերությունների վերակազմավորման գործընթացը: Ընկերությունների վերակազմավորման համար անհրաժեշտ ծախսերի, կանոնադրական կապիտալի նվազեցման գրանցման ծախսերի, դեպոզիտարիայում գրանցման ծախսերի և այլ ծախսերի համար անհրաժեշտ է շուրջ 256.0 մլն դրամ, որը ներկայումս ընկերությունները, ելնելով ֆինանսական վիճակից, ի վիճակի չեն իրականացնելու: Նախատեսվում է ընկերությունների գործունեությունը դադարեցնել:</p>	
	<p>77.5 Զրի որակը պետական լիազոր մարմնի կողմից հաստատված սանիտարական կանոններին և նորմերին</p>	<p>Համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության հետ կնքված վարձակալության պայմանագրի՝ ընկերության սպասարկման տարածքում բաժանորդներին մատուցվող ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների բարելավման գործընթացը շարունակական է:</p>			

		<p>համապատասխանեցնել ու նպատակով ՀՀ բնակավայրերում խմելու ջրի որակի մշտական մոնիթորինգի իրականացման գործուն մեխանիզմի սահմանում</p>	<p>Ընկերության սպասարկման տարածքում խմելու ջրի մատակարարումն իրականացվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի «խմելու ջուր: Զրամատակարարման կենտրոնացված համակարգերի խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» սանիտարական կանոնները և նորմերը՝ N2-III-Ա2-1» N876 հրամանով հաստատված գործող նորմերին համապատասխան: Զրային կոմիտեն՝ ամսական կտրվածքով ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվությունն ուղարկում է «Վեոլիա Զուր» ՓԲ ընկերություն՝ իր սպասարկման տարածքում գտնվող բնակավայրերում խմելու ջրի որակի մոնիթորինգի արդյունքում արձանագրված շեղումների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով: 2025 թվականին մատակարարվող ջրի որակը կազմել է 98.54%:</p>		
		<p>77.6 «Աէրացիա» կեղտաջրերի նոր մաքրման կայանի (ԿՄԿ) շինարարության կապալի միջազգային պայմանագրի ավարտի ապահովում, գույքի ձևավորումից հետո կայանի գործարկում և շահագործման հանձնում, ԿՄԿ-ի վերակառուցման</p>		<p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին որոշակի իրավասություններ վերապահելու և «Աէրացիա» կեղտաջրերի մաքրման կայանի վերականգնման ծրագրի պայմանագիրն ավարտելու վերաբերյալ» ՀՀ կառավարության որոշման</p>	

		<p>ծրագրի հետագա փուլերի համար նախապատրաստական աշխատանքների իրականացում</p>		<p>նախագիծը սահմանված ընթացակարգով շրջանառվել և ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ, նախագիծը բազմաթիվ անգամ քննարկվել է Տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի նիստերում և առաջարկությունների արդյունքում լրամշակվել է:</p> <p>Նախագծի վերադարձման հիմնական բարդույթը կայանում է նրանում, որ Վարչապետի աշխատակազմի կողմից ներկայացված եզրակացությամբ՝ բացակայում է համապատասխան լիազորող նորմը: 2023թ. հունվարին ՀՀ փոխվարչապետ Տ.Իսախանյանի մոտ տեղի է ունեցել քննարկում, որի արդյունքներով հանձնարարվել է «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանի վերականգնման ծրագրի</p>
--	--	---	--	--

				<p>պայմանագիրն ավարտելու, ինչպես նաև «Նոր Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանի հետագա գործարկման և շահագործման գործընթացների կազմակերպումը իրականացնել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցով, ինչի արդյունքում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը մշակել է ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որը շրջանառվել է Ջրային կոմիտեի կողմից, սակայն հետագա ընթացքի վերաբերյալ հիմնական վեկտորները դեռևս հստակեցված չեն:</p> <p>Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 3-ի N1579-Ն որոշմամբ ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 16,986.0 հազ. դրամ գումար «Աերացիա մաքրման կայանի» պահնորդական ծառայություններ ձեռք բերելու համար: Հայաստանի</p>	
--	--	--	--	---	--

				<p>տարածքային զարգացման հիմնադրամի և «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի սեպտեմբերի 18-ին կնքվել է N ՀՏՁՀ-ԱՄԿ-ԾՁԲ-2024/1 պայմանագիր, որով «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն իրականացնում է ՀՀ Երևան քաղաքի Շիրակի փողոցի 94շ. հասցեում գտնվող «Աէրացիա մաքրման կայանի» պահնորդական ծառայությունները:</p>	
		<p>77.7 Սևանա լճի ավազանի քաղաքային 3 բնակավայրերում գործող ԿՄԿ-ներից արտանետվող կեղտաջրերի ամբողջական մաքրման ապահովման, տարածաշրջանի գյուղական բնակավայրերի կոյուղացման և տարածքում գործող տնտեսավարող սուբյեկտների կողմից կեղտաջրերի մաքրման լուկալ կայանների և սարքավորումների</p>	<p>2025 թվականին Ասիական Ջարգացման Բանկի կողմից նախատեսված Սևանա լճի ափին գտնվող Գավառ, Մարտունի ու Վարդենիս համայնքներում գործող թվով 3 կեղտաջրերի մաքրման կայանների (այսուհետ՝ ԿՄԿ) արդիականացմանը վերաբերող աշխատանքների պլանավորման գործընթացներն ավարտման փուլում են: Աշխատանքների պլանավորման գործընթացները ներառում են՝ Սևանա լճի ավազանի կեղտաջրերի հեռացման համակարգերի նախնական նախագծերի, ինչպես նաև 3 ԿՄԿ-ների արդիականացմանը վերաբերող տեխնիկատնտեսական հաշվետվությունների և հանրային ներդրումային փաթեթի ձեռքբերման գործընթացներ:</p>		

	տեղադրման ուղղությամբ աշխատանքների իրականացում			
	77.8 Պետական սեփականություն հանդիսացող՝ գործող կեղտաջրի մաքրման կայաններից արտահոսող մաքրված կեղտաջրի որակի մշտադիտարկման համակարգի ստեղծում			
	77.9. Կոյուղու ցանցին չմիացած տնտեսավարողների օբյեկտներում կեղտաջրերի մաքրման լոկալ կայանների տեղադրման և սպասարկման մասնագիտացված կառույցների ստեղծում	2025թ. ԱԶԲ-ի հետ, ի թիվս նախատեսված աշխատանքների, քննարկվել է նաև Սևանի ավազանում գտնվող տնտեսավարողների օբյեկտներից հեռացվող կեղտաջրերի ուսումնասիրության և դրանց մաքրման իրագործելիությանը վերաբերող հարցեր: Ջրային կոմիտեն շահագրգիռ գերատեսչությունների հետ իրականացնում է համատեղ աշխատանքներ՝ Սևանա լճի ափամերձ տարածքում կենտրոնացված կոյուղու ցանցին չմիացված տնտեսավարող սուբյեկտների լոկալ մաքրման կայանների հնարավոր տեղադրման ուղղությամբ:		
	77.10 «Կեղտաջրերի հեռացման բնագավառի զարգացման հայեցակարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն	Որոշման նախագծում ներառված դրույթները նախատեսվում է ներառել ներկայումս մշակվող ջրային ոլորտի ռազմավարության մշակման մեջ: Սահմանվել են ջրային ոլորտի ռազմավարական ծրագրի հայեցակարգային մոտեցումները: Ներկայումս մշակման փուլում է ջրային ոլորտի ռազմավարական ծրագրի մշակման համար խորհրդատվական		

			<p>ծառայությունների ձեռքբերման Առաջադրանքի պայմանները:</p>		
	<p>77.11 Հայաստանի Հանրապետության 6 մարզերի 11 քաղաքներում և 41 գյուղական բնակավայրերում, այդ թվում՝ Գյումրի, Վանաձոր և Արմավիր քաղաքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման աշխատանքների իրականացում</p>	<p>ՀՀ կառավարության 01.06.2023թ. N 877-Ա որոշման հիման վրա «ՀԵԾ-II, փուլ-3» ծրագրի ԼՈՏ-1, ԼՈՏ-2, ԼՈՏ-3 բաղադրիչների պայմանագրային ժամկետները երկարաձգվել են մինչև 31.05.2024թ:</p> <p>ՀՀ կառավարության 30.05.2024թ. N 820-Ա որոշման հիման վրա ԼՈՏ-3 բաղադրիչի պայմանագրային ժամկետը երկարաձգվել է մինչև 30.09.2024թ., իսկ ԼՈՏ-1, ԼՈՏ-2 բաղադրիչների պայմանագրային ժամկետները երկարաձգվել են մինչև 30.11.2024թ.: ԼՈՏ-2 բաղադրիչի թերությունների վերացման ժամկետը ավարտվել է 30.11.2025թ, խորհրդատուի կողմից պատրաստվում է պայմանագրի ավարտական զեկույցը: ԼՈՏ-1 բաղադրիչի համար 30.11.2025թ-ից սկսվել է 1 տարի թերությունների վերացման ժամկետը: Լոտ-3 ծրագրով հայտարարվել է աշխատանքների ժամանակավոր կասեցում : Ծրագրով ընդհանուր առմամբ նախատեսված է իրականացնել հետևյալ աշխատանքները. ջրատարի կառուցում -64,3 կմ, բաշխիչ ցանցի վերակառուցում -510,7 կմ, տնային մուտքագծերի կառուցում -195,5 կմ, անհատական ջրաչափական հանգույցների տեղադրում- 17714 հատ, կոյուղագծերի կառուցում – 30,8 կմ: 01.12.2025թ. դրությամբ իրականացվել են. ջրատարի կառուցում -64,0 կմ, բաշխիչ ցանցի վերակառուցում -511,1 կմ, տնային մուտքագծերի կառուցում -218,8 կմ, անհատական ջրաչափական հանգույցների տեղադրում- 17703 հատ, կոյուղագծերի կառուցում – 29,5 կմ:</p>	<p>Լոտ-3 ծրագրով հայտարարվել է աշխատանքների ժամանակավոր կասեցում 112 օր առավելագույն ժամկետով՝ կապված Մարտունի համայնքի Գեղիովիտ բնակավայրում ջրաչափերի տեղադրման խնդրի հետ, Վարդենիս բնակավայրում համայնքի կողմից պոմպակայանի տեխպայմանի ձեռքբերման ուշացման հետ, որի պատճառով հնարավոր չէ իրականացնել թվով 20 բազմաբնակարան շենքերի միացումները, ինչպես նաև Մուխութություն-Թասիկ ջրատարի 4,3կմ վթարային վիճակում գտնվող հատվածի փոխարինման հետ, որից հետո միայն հնարավոր կլինի իրականացնել ծրագրում ներառված Տոլորս, Թասիկ և Հացավան բնակավայրերի ջրամատակարարումը:</p>		

			<p>Այդ թվում 2025թ. ընթացքում իրականացվել են. ջրատարի կառուցում -0,4 կմ բաշխիչ ցանցի վերակառուցում -3.4 կմ, տնային մուտքագծերի կառուցում -22.3 կմ, անհատական ջրաչափական հանգույցների տեղադրում- 468 հատ:</p>		
	<p>77.12 Վարձակալի կողմից չսպասարկվող 4 գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքների իրականացում և շահագործման ապահովում</p>		<p>«ՀԵԾ-II, փուլ-3» ծրագրի ԼՈՏ-4 բաղադրիչի շրջանակներում ստորագրվել են երեք շինարարական պայմանագրեր. ԼՈՏ-4A/1 (Ագարակ, Ուռուտ համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերակառուցում), ԼՈՏ-4A/2 (Արզական, Խնածախ, համայնքների ջրամատակարարման համակարգերի վերակառուցում): Աշխատանքների մեկնարկը տրվել է 01.04.2025թ., ավարտը նախատեսվում է 2026թ. 3-րդ եռամսյակում: Ծրագրով ընդհանուր առմամբ նախատեսված է իրականացնել հետևյալ աշխատանքները.</p> <p>ջրատարի կառուցում -15,1 կմ, բաշխիչ ցանցի վերակառուցում -59,1 կմ, տնային մուտքագծերի կառուցում -16,3 կմ, անհատական ջրաչափական հանգույցների տեղադրում- 1482 հատ, կոյուղագծերի կառուցում – 29,7 կմ:</p> <p>01.12.2025թ. դրությամբ իրականացվել են.</p> <p>ջրատարի կառուցում -14.4 կմ, բաշխիչ ցանցի վերակառուցում -59,1 կմ, տնային մուտքագծերի կառուցում 13,1 կմ, անհատական ջրաչափական հանգույցների տեղադրում- 1835 հատ, կոյուղագծերի կառուցում – 1,0 կմ:</p> <p>Ստորագրվել է ԼՈՏ-4B շինարարական պայմանագիրը՝ FIDIC դեղին գիրք, (Ագարակ, Ուռուտ բնակավայրերի կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում): Նախագծային աշխատանքների մեկնարկը տրվել է 01.09.2025թ, շինարարական աշխատանքների</p>		

			<p>մեկնարկը նարատեսվում է 2026թ.3-րդ եռամսյակում, ավարտը՝ 2027թ. 4-րդ եռամսյակում:</p>		
		<p>77.13 Երևան քաղաքի ջրամատակարարման համակարգերի բարելավման աշխատանքների իրականացում</p>	<p>Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր (ԵՋԲԾ)  Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (ՎՋԵԲ), Եվրոպական ներդրումային բանկ (ԵՆԲ) և Եվրամիության հարևանության ներդրումային ծրագիր (ԵՄ ՀՆԾ)  Ծրագրի իրականացման ժամկետը նախատեսված է եղել 2015–2019թթ.: Ծրագրի սկզբնական փուլում այն իրականացվել է «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից, սակայն ՀՀ կառավարության 28.02.2017թ. № 191-Ա որոշմամբ ծրագրի իրականացման գործառույթները փոխանցվել են ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ին:  Այնուհետև ՀՀ կառավարության 28.02.2019թ. № 170-Ն որոշմամբ ծրագրի իրականացման գործառույթները փոխանցվել են ՀՏՁՀ-ին, որոնք որոշակի ազդեցություն են ունեցել Ծրագրի իրականացման ժամկետների վրա:  Ծրագրի շրջանակներում առաջացած խնայողությունների հաշվին նախատեսվել է իրականացնել նաև Արարատյան պոմպակայանում 3 պոմպերի փոխարինման, Բալախովիտ բնակավայրի, Փիրումյան /Փաթեթ 6/, Նոր Խարբերդ և հարակից թաղամասերի /Փաթեթ 7/ ջրամատակարարման բաշխիչ ցանցերի վերակառուցման և անհատական տնային միացումների փոխարինման աշխատանքները:  Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագրի շրջանակներում 2016 թվականին սկսված և անավարտ մնացած /Փաթեթներ 1, 2, 3/, ծրագրով նախատեսված /Փաթեթներ 4 և 5/, խնայողությունների հաշվին</p>		

			<p>նախատեսված /Փաթեթներ 6 և 7/ աշխատանքներն ավատին հասցնելու համար ՀՀ կառավարության և Եվրոպական Միության միջև կնքված գործող ֆինանսական համաձայնագրի համաձայն ֆինանսավորման գործարքների իրականացման փուլի սահմանված ժամկետը երկարաձգվել է մինչև 04.01.2025 թ. և փակման սահմանված ժամկետը մինչև 04.01.2026 թ., իսկ ՀՀ կառավարության և Եվրոպական Ներդրումային Բանկի միջև կնքված գործող ֆինանսական պայմանագրի համաձայն վարկային միջոցների հասանելիության սահմանված ժամկետը երկարաձգվել է մինչև 31.12.2024 թ. և աշխատանքների իրականացման սահմանված ժամկետը մինչև 31.12.2025 թ.:</p> <p>Ծրագրով ընդհանուր առմամբ նախատեսված է եղել իրականացնել 202.0 կմ երկարությամբ ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերականգնման, 134.2 կմ երկարությամբ անհատական տնային միացումների խողովակաշարերի փոխարինման, 18,245 բաժանորդների ջրաչափական հանգույցների տեղադրման և 30 հատ բակային պոմպակայանների վերակառուցման աշխատանքներ:</p> <p>30.12.2025թ. դրությամբ իրականացվել են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• 200.6 կմ ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերականգնման,</li> <li>• 129.0 կմ անհատական տնային միացումների խողովակաշարերի փոխարինման,</li> <li>• 19,176 բաժանորդների ջրաչափական հանգույցների տեղադրման,</li> <li>• 30 հատ բակային պոմպակայանների վերակառուցման և</li> </ul>		
--	--	--	---	--	--

			<ul style="list-style-type: none"> <li>Արարատյան պոմպակայանում 3 նոր պոմպերի փոխարինման աշխատանքները: Ծրագիրն ավարտվել է:</li> </ul>		
78	Ոռոգման ոլորտում առկա խնդիրները լուծելու և վիճակը բարելավելու նպատակով նախատեսվում է իրականացնել անհրաժեշտ օրենսդրական և կառուցվածքային բարեփոխումներ	78.1 «Ոռոգման համակարգերի արդյունավետ կառավարման ռազմավարական ծրագրի» մշակում և իրականացում	<p>Ոռոգման համակարգերի արդյունավետ կառավարման ուղղությամբ սահմանվել են ջրային ոլորտի ռազմավարական ծրագրի հայեցակարգային մոտեցումները: Ներկայումս մշակման փուլում է ջրային ոլորտի ռազմավարական ծրագրի մշակման համար խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման Առաջադրանքի Պայմանները:</p> <p>Ոռոգման ոլորտի ռազմավարության մշակումը ներառված է նաև.</p> <p>1. Համաշխարհային բանկի WISE ծրագրի (Ծրագիր) Բաղադրիչ 1.1-ում (Ջրային ռեսուրսների ազգային քաղաքականության և պլանավորման հզորացում) որով նախատեսվում է մշակել «Ոռոգման ազգային ռազմավարությունը», որի համար արդեն իսկ մշակվել են Առաջադրանքի Պայմանները:</p> <p>«Ոռոգման ազգային ռազմավարության» մշակման աշխատանքների մեկնարկը ակնկալվում է Ծրագրի իրականացման սկզբնական փուլում:</p> <p>2. «Ոռոգվող գյուղատնտեսության զարգացումը Արարատի և Արմավիրի մարզերում» ծրագրի շրջանակներում՝ Հանձնարարություն 1 –ով ևս նախատեսված է «Ոռոգման համակարգերի արդյունավետ կառավարման ռազմավարական ծրագրի» մշակում և դրա իրականացման միջոցառումների ծրագրի կազմում:</p> <p>Այս հանձնարարության իրականացման համար հիմք են հանդիսացել Ջրային կոմիտեի կողմից մշակված «Հայաստանի Հանրապետության ոռոգման</p>		

			<p>համակարգի արդյունավետ կառավարման և կայուն զարգացման հայեցակարգի նախագիծը»:</p> <p>Խորհրդատու կազմակերպության կողմից ներկայումս ընթացքի մեջ են ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքները:</p>		
79	<p>Ոռոգման համակարգերը շարունակաբար արդի ջրաչափական սարքավորումներով կահավորում և տվյալների հավաքման ու վերահսկողական համակարգով հագեցում</p>	<p>79.1. Հիդրոտեխնիկական կառույցների տեխնիկական, վիճակի գնահատում և վերահսկելիության բարձրացում</p> <p>79.2. Տեխնիկական, տնտեսական, կազմակերպական, ֆինանսական և իրավական բնույթի փոխկապակցված համալիր միջոցառումների իրականացման նպատակով էլեկտրոնային հարթակի ներդրում</p>	<p>ՄԱԿ-ի ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող «Անցում» ցածրաձխաձնային ոռոգման տեխնոլոգիաների Լոռու և Շիրակի մարզերում բարձրացված արտադրողականության, պարենային անվտանգության և բարելավված կենսապահովման համար ծրագրի շրջանակներում ստեղծվել է Էլ.հարթակ համապատասխան սերվերային համակարգի վրա, որը գործարկվել է 2025 թվականին, սակայն ջրօգտագործողների ընկերությունների և «Ջրառ» ՓԲԸ-ի սպասարկման տարածքներում ջրօգտագործման թույլտվություն ունեցող ջրառի կետերում և ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում տեղադրված ջրաչափական սարքավորումների տվյալների օնլայն դիտման հնարավորություն դեռևս ապահովված չէ, քանի որ դեռևս աշխատանքներ են կատարվում հարթակն անհրաժեշտ տեղեկատվությամբ համալրելու համար:</p>		
80	<p>Ոռոգման համակարգերում շահագործման պայմանների</p>	<p>80.1. Իրականացնել համատարած տեխնիկական աուդիտ և աուդիտի արդյունքներով</p>	<p>Համաշխարհային բանկի WISE ծրագրի Բաղադրիչ 1.1-ով (Ջրային ռեսուրսների ազգային քաղաքականության և պլանավորման հզորացում) նախատեսվում է համակարգի մանրամասն գույքագրում՝</p>		

	<p>տեխնիկական վիճակի գնահատում և բարելավում</p>	<p>մշակել և իրականացնել կապիտալ ներդրումների մոտեցումներ և չափորոշիչներ</p>	<p>խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման շրջանակներում: «Ոռոգվող գյուղատնտեսության զարգացումը Արարատի և Արմավիրի մարզերում» ծրագրի Ջրային բաղադրիչով նախատեսված է իրականացնել պետական սեփականություն հանդիսացող ոռոգման համակարգերի չափագրության, քարտեզագրման, տեխնիկական գնահատման և վերականգնման կարիքների գնահատման աշխատանքներ: Մրցույթի արդյունքում ընտրված «ԱՄՊԵՐԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայումս իրականացվում են ՀՏԿ-ների քարտեզագրման, չափագրման և դրանց փաստացի վիճակի գնահատման աշխատանքներ:</p>		
		<p>80.2.Իրականացնել ոռոգման համակարգերի վերականգնմանն ուղղված կապիտալ ներդրումներ և ներդրումային քաղաքականություն</p>	<p>2025 թվականին ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին իրականացվել է 16 օբյեկտների հիմնանորոգման շինարական աշխատանքներ, որից 11-ի շինարարությունն ավարտվել է՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) Թալին 1 պոմպակայանի վերանորոգում,</li> <li>2) «Քաղցրաշեն 1 պոմպակայանի N 5 պոմպի մղման խողովակաշարի հատվածի» վթարային հատվածի վերանորոգում,</li> <li>3) Քաղցրաշեն 1 պոմպակայանի N 1 մղման խողովակաշարի վթարային հատվածի վերանորոգում,</li> <li>4) Արարատ համայնքի Արարատ բնակավայրի վարչական տարածքի ներքին ցանցի մոտ 880 մետր հատվածի հիմնանորոգում,</li> <li>5) Յաղդան պոմպակայանի (Յաղդանի բնակավայր) հիմնանորոգում,</li> <li>6) «Հերմոն-Ելփին» ինքնահոս ջրատարի «Ռինդ-Արենի» տեղամասի հիմնանորոգում,</li> </ol>		

			<p>7) Մրգաշատ համայնքի Սոնեյի և Վալոդի խորքային հորերի հեռացնող ջրանցքների, ինչպես նաև դրանց հատման տեղից դեպի հողատարածքներ գնացող ջրանցքների վերակառուցում,</p> <p>8) Ղարաղալայի պոմպակայանի մղման խողովակաշարի վթարային հատվածների վերակառուցում,</p> <p>9) «Արագափ-1» ջրհան կայանի երկրորդ գոտու աջ հեռացնող ջրատարի վերակառուցում:</p> <p>10) Արտամետի «Ձույգ ցանց» ներտնտեսային ջրանցքի վերակառուցման աշխատանքներ,</p> <p>11) «Սյունիք» ԶՕԸ-ի կողմից շահագործվող Արաքս 1 պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգման աշխատանքներ:</p> <p>3 օբյեկտների մասով աշխատանքները կավարտվեն 2026 թվականի 1-ին եռամսյակում`</p> <p>1) «Արագափ-1» պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգման աշխատանքներ (1-ին փուլ),</p> <p>2) Աշտարակի մայր ջրանցքի 2 կմ (ՊԿ0+00-ՊԿ20+00) հատվածի վերանորոգման աշխատանքներ,</p> <p>3) «Տավուշ» ԶՕԸ-ի կողմից ապասարկվող Զեյթուն N1 պոմպակայանի կարճ գծի հեռացնող ջրանցքի հիմնանորոգման աշխատանքներ:</p> <p>«Գետափ-Եղեգնաձոր» ջրանցքի հիմնանորոգման աշխատանքների ավարտը նախատեսվում է 2026 թվականի առաջին կիսամյակում:</p> <p>ՀՀ Սյունիքի մարզի Որոտանի մայր ջրանցքի Հարթաշենի դյուկերի վթարված հատվածի կառուցման աշխատանքները դեռևս չեն մեկնարկել:</p>	
--	--	--	---	--

			Արենի-Խաչիկ եռաստիճան պոմպակայանի և Սարալանջի 7/1 պոմպակայանի հիմնանորոգման աշխատանքների նախագծերն ստացել են քաղաքաշինական պարզ փորձաքննության դրական եզրակացությունը և պատրաստ են շինարարության:		
81	Ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր	81.1. Իրականացնել ոռոգման համակարգերի բարելավում՝ միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցում	Միջոցառումն իրականացվել է «Ոռոգման համակարգերի արդիականացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում՝ Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ: Ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքները մեկնարկել են 2018 թվականին, իրականացվել սահմանված ժամկետներում և ավարտվել 2025 թվականի հունիսի 30-ին: Հաշվետու ժամանակահատվածում վերականգնվել է միջտնտեսային մեկ ջրանցքի վերջին 1.35 կմ երկարությամբ վթարային հատվածը: Ծրագրով ընդհանուր առմամբ՝ <ul style="list-style-type: none"> <li>• կառուցվել է ինքնահոս ոռոգման 7 համակարգ՝ 37.4 կմ,</li> <li>• վերականգնվել են 4 մայր և 50 միջտնտեսային ջրանցքների 135.8 կմ ծայրահեղ վնասված և վթարային հատվածներ,</li> </ul> 111 բնակավայրում հիմնանորոգվել են 279.0 կմ ընդհանուր երկարությամբ ոռոգման ներտնտեսային համակարգեր:		
82	2021-2026 թվականների ընթացքում Ջրամբարաշինության (Կապսի և Վեդու ջրամբարներ) ծրագրերի նախապատրաստում և իրականացում	82.1.«Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի» Փուլ 1. Կապսի ջրամբարի կառուցում	Շարունակվել են 2023 թվականին մեկնարկած Կապսի ջրամբարի և օժանդակ կառուցվածքների կառուցման աշխատանքները, մասնավորապես՝ շարունակվել են շինարարական ճամբարի հիմնման և մոբիլիզացիոն աշխատանքները, ավարտվել են ջրահեռացման խրամուղու բետոնացման աշխատանքները, իրականացվել են Ոռոգման թունելի մուտքամասի և	Ուշացման հիմնական պատճառը Կապսի կողմից որակյալ անձնակազմի բացակայությունն ու Պայմանագրով պահանջվող և	

		<p>ելքամասի ամրակայման աշխատաքներ, Ախուրյան գետի հունի տեղափոխման նպատակով հիդրոմեխանիկական սարքավորումների և հավելյալ ցեմենտացիոն աշխատանքներն ու գազաֆիկացան նպատակով 2,5 կմ գազի գծի կառուցման աշխատանքներ:</p> <p>Կապսի ջրամբարի և օժանդակ կառուցվածքների կառուցման պայմանագրի 15.1 կետի համաձայն, շինարարական աշխատանքները դանդաղ տեմպով իրականացնելու, Պայմանագրով պահանջվող փաստաթղթերը ոչ պատշաճ որակով մշակելու և սահմանված ժամկետների խախտումների պատճառով, 2025 թվականի հուլիսի 22-ին Կապալառուին է ներկայացվել «Ուղղումներ կատարելու մասին ծանուցում N 2» փաստաթղթը: Ծանուցումը կապալառուին տրվել է վերջնաժամկետ մինչև 2025 թվականի հոկտեմբերի 31-ը՝ իր կողմից 2025 թվականի հունիսի 30-ին ներկայացված վերջին կարճաժամկետ Իրականացման ժամանակացույցով սահմանված առաջին առանցքային հենանիշ «Գետի հոսքի հեռացում կառուցված ջրահեռացման խրամուղիով» աշխատաքները իրականացնելու և պայմանագրային առկա թերությունները շտկելու նպատակով:</p> <p>Կապալառուի կողմից ծանուցումը սահմանված աշխատանքներն ու պայմանագրային շտկումները ժամկետներում չիրականացնելու պատճառով՝ հիմք ընդունելով ՀՀ ՏԿԵ նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 9-ի գրությունը, որոշում է կայացվել կապալառուի հետ լուծել պայմանագիրը:</p> <p>Պայմանագրի դադարեցման հիմնական պարզաբանումները կհստակեցվեն պայմանագրային բանակցությունների արդյունքով:</p>	փաստաթղթերի ոչ պատշաճ որակով մշակումն է:	
--	--	--	--	--

		<p>82.2. «Ախտորյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի» Փուլ 2. ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում</p>	<p>Փուլ 2-ի ֆինանսական միջոցները Կապսի պատվարի շինարարությանն ուղղելու նպատակով Վերակառուցման վարկերի բանկի (KFW) կողմից մշակված համաձայնագրի փոփոխության նախագիծ ստորագրվել է 2024թ. մայիս 2-ին և հաստատվել ՀՀ նախագահի հունիսի 25-ի ՆՀ-191-Ն հրամանագրով:</p>		
		<p>82.3. Վեդու ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների, ջրի փոխադրող և ոռոգման համակարգի շինարարական աշխատանքների իրականացում: Վեդու ջրամբարի իշխման տակ գտնվող ներտնտեսային ոռոգման ցանցի մանրամասն նախագծային աշխատանքների ավարտ</p>	<p>2024 թվականին ավարտվել են Վեդու ջրամբարի հիմնական աշխատանքներն ու ներտնտեսային ոռոգման ցանցի կառուցումը: 2025 թվականին իրականացվել են SCADA համակարգի և էլեկտրամատակարարման մոնտաժման ու կարգաբերման, ինչպես նաև ջրամբարի առաջին ջրալցման աշխատանքները:</p>	<p>Ձգձգումները պայմանավորված են այն հանգամանքով, որ շինարարության փուլում Կապալառուի կողմից եղել են ուշացումներ, ինչպես նաև ներկայումս առկա են տեխնիկական խնդիրներ, որոնց լուծման ուղղությամբ ներկայումս բանակցություններ են տարվում բոլոր շահագրգիռ կողմերի հետ:</p>	
83	<p>Ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակի ապահովման հնարավորությունների</p>	<p>83.1. Գեղարքունիքի մարզում Արգիճիի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում</p>		<p>ՀՀ Գեղարքունիքի մարզի Արգիճիի ջրամբարի ՆՆՓ-երի կազմման աշխատանքները ժամանակավորապես դադարեցված են (գտնվում են տեխնիկական դադարի փուլում)՝ ջրամբարի նախնական ընտրված</p>	

	ստեղծում, ինքնահոս համակարգերի և նոր ջրամբարների նախագծում և շինարարություն			տեղամասում առկա «Հիդրոկորպորացիա» ՓԲԸ-ին պատկանող ՀԷԿ-ի օրվա կարգավորման ջրամբարի առկայությամբ պայմանավորված, որի պատճառով անհնարինություն է առաջացել ջրամբարի նախատեսվող տարածքում իրականացնել համապատասխան հետազոտություններ:	
		83.2.Գեղարքունիքի մարզում Աստղաձորի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Գեղարքունիքի մարզի Աստղաձորի ջրամբարի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներն ավարտվել են, որոնք անցել են պարզ փորձաքննություն և ներկայացվել են համալիր փորձաքննության: Հանրային ներդրումային կոմիտեի 2025թ. հոկտեմբերի 23-ին կայացած նիստում քննարկվել և հաստատվել է Աստղաձորի ջրամբարի ներդրումային ծրագիրը:		
		83.3.Վայոց ձորի մարզում Ելփինի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Վայոց ձորի մարզի Ելփինի ջրամբարի նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի համար ստացվել է համալիր փորձաքննության դրական եզրակացությունը: Հանրային ներդրումային կոմիտեի 2025թ. հոկտեմբերի 23-ին կայացած նիստում քննարկվել և հաստատվել է Ելփինի ջրամբարի ներդրումային ծրագիրը:		
		83.4.Վայոց ձորի Ինձորուտի ջրամբարի կառուցման նախագծային	ՀՀ ֆինանսների նախարարությունը 2025 թվականի նոյեմբերի 28-ի N 04/5-2/27070-2025 գրությամբ ջրամբարի տեխնիկատնտեսական, իրագործելիության ուսումնասիրությունների և նախագծման		

	փաստաթղթերի կազմում և կառուցում	աշխատանքների գործընթացների մեկնարկի վերաբերյալ հայտնում է, որ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ Բանկ) հետ ունեցած վերջին քննարկումների ընթացքում Բանկը կրկին վերահաստատել է իր պատրաստակամությունն աջակցելու ծրագրի շրջանակներում ջրամբարի կառուցման իրագործելիության ուսումնասիրությունների իրականացմանը: Առաջիկայում նախատեսվում է Բանկի աջակցությամբ մեկնարկել ջրամբարի կառուցման իրագործելիության ուսումնասիրությունները:		
	83.5.Վայոց ձորի Վերնաշենի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	ՀՀ ֆինանսների նախարարությունը 2025 թվականի նոյեմբերի 28-ի N 04/5-2/27070-2025 գրությամբ ջրամբարի տեխնիկատնտեսական, իրագործելիության ուսումնասիրությունների և նախագծման աշխատանքների գործընթացների մեկնարկի վերաբերյալ հայտնում է, որ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ Բանկ) հետ ունեցած վերջին քննարկումների ընթացքում Բանկը կրկին վերահաստատել է իր պատրաստակամությունն աջակցելու ծրագրի շրջանակներում ջրամբարի կառուցման իրագործելիության ուսումնասիրությունների իրականացմանը: Առաջիկայում նախատեսվում է Բանկի աջակցությամբ մեկնարկել ջրամբարի կառուցման իրագործելիության ուսումնասիրությունները:		
	83.6.Վայոց ձորի Խաչիկի ջրամբարի կառուցման նախագծային	ՀՀ ֆինանսների նախարարությունը 2025 թվականի նոյեմբերի 28-ի N 04/5-2/27070-2025 գրությամբ ջրամբարի տեխնիկատնտեսական, իրագործելիության ուսումնասիրությունների և նախագծման		

	փաստաթղթերի կազմում և կառուցում	աշխատանքների գործընթացների մեկնարկի վերաբերյալ հայտնում է, որ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ Բանկ) հետ ունեցած վերջին քննարկումների ընթացքում Բանկը կրկին վերահաստատել է իր պատրաստակամությունն աջակցելու ծրագրի շրջանակներում ջրամբարի կառուցման իրագործելիության ուսումնասիրությունների իրականացմանը: Առաջիկայում նախատեսվում է Բանկի աջակցությամբ մեկնարկել ջրամբարի կառուցման իրագործելիության ուսումնասիրությունները:		
	83.7. Վայոց ձորի մարզում Գետիկ վանքի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	ՀՀ ֆինանսների նախարարությունը 2025 թվականի նոյեմբերի 28-ի N 04/5-2/27070-2025 գրությամբ ջրամբարի տեխնիկատնտեսական, իրագործելիության ուսումնասիրությունների և նախագծման աշխատանքների գործընթացների մեկնարկի վերաբերյալ հայտնում է, որ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ Բանկ) հետ ունեցած վերջին քննարկումների ընթացքում Բանկը կրկին վերահաստատել է իր պատրաստակամությունն աջակցելու ծրագրի շրջանակներում ջրամբարի կառուցման իրագործելիության ուսումնասիրությունների իրականացմանը: Առաջիկայում նախատեսվում է Բանկի աջակցությամբ մեկնարկել ջրամբարի կառուցման իրագործելիության ուսումնասիրությունները:		
	83.8. Վայոց ձորի մարզում Զիրակի ջրամբարի կառուցման նախագծային	ՀՀ ֆինանսների նախարարությունը 2025 թվականի նոյեմբերի 28-ի N 04/5-2/27070-2025 գրությամբ ջրամբարի տեխնիկատնտեսական, իրագործելիության ուսումնասիրությունների և նախագծման		

	փաստաթղթերի կազմում և կառուցում	աշխատանքների գործընթացների մեկնարկի վերաբերյալ հայտնում է, որ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ Բանկ) հետ ունեցած վերջին քննարկումների ընթացքում Բանկը կրկին վերահաստատել է իր պատրաստակամությունն աջակցելու ծրագրի շրջանակներում ջրամբարի կառուցման իրագործելիության ուսումնասիրությունների իրականացմանը: Առաջիկայում նախատեսվում է Բանկի աջակցությամբ մեկնարկել ջրամբարի կառուցման իրագործելիության ուսումնասիրությունները:		
	83.9. Արմավիրի մարզի Քասախի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Ջրամբարի նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի համար ստացվել է համալիր փորձաքննության դրական եզրակացությունը: Հանրային ներդրումային կոմիտեի 2025 թվականի հոկտեմբերի 23-ին կայացած նիստում քննարկվել և հաստատվել է Քասախի ջրամբարի ներդրումային ծրագիրը:		
	83.10. Արմավիրի մարզի Սելավ-Մաստարայի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	ՀՀ ֆինանսների նախարարությունը 2025 թվականի նոյեմբերի 28-ի N 04/5-2/27070-2025 գրությամբ ջրամբարի տեխնիկատնտեսական, իրագործելիության ուսումնասիրությունների և նախագծման աշխատանքների գործընթացների մեկնարկի վերաբերյալ հայտնում է, որ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ Բանկ) հետ ունեցած վերջին քննարկումների ընթացքում Բանկը կրկին վերահաստատել է իր պատրաստակամությունն աջակցելու ծրագրի շրջանակներում ջրամբարի կառուցման իրագործելիության ուսումնասիրությունների իրականացմանը:		

			Առաջիկայում նախատեսվում է Բանկի աջակցությամբ մեկնարկել ջրամբարի կառուցման իրագործելիության ուսումնասիրությունները:		
		83.11.Տավուշի մարզում Հախում-2 ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	<p>ՀՀ ֆինանսների նախարարությունը 2025 թվականի նոյեմբերի 28-ի N 04/5-2/27070-2025 գրությամբ ջրամբարի տեխնիկատնտեսական, իրագործելիության ուսումնասիրությունների և նախագծման աշխատանքների գործընթացների մեկնարկի վերաբերյալ հայտնում է, որ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ Բանկ) հետ ունեցած վերջին քննարկումների ընթացքում Բանկը կրկին վերահաստատել է իր պատրաստակամությունն աջակցելու ծրագրի շրջանակներում ջրամբարի կառուցման իրագործելիության ուսումնասիրությունների իրականացմանը:</p> <p>Առաջիկայում նախատեսվում է Բանկի աջակցությամբ մեկնարկել ջրամբարի կառուցման իրագործելիության ուսումնասիրությունները:</p>		
		83.12.Տավուշի մարզում Կողբի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	<p>ՀՀ ֆինանսների նախարարությունը 2025 թվականի նոյեմբերի 28-ի N 04/5-2/27070-2025 գրությամբ ջրամբարի տեխնիկատնտեսական, իրագործելիության ուսումնասիրությունների և նախագծման աշխատանքների գործընթացների մեկնարկի վերաբերյալ հայտնում է, որ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ Բանկ) հետ ունեցած վերջին քննարկումների ընթացքում Բանկը կրկին վերահաստատել է իր պատրաստակամությունն աջակցելու ծրագրի շրջանակներում ջրամբարի կառուցման իրագործելիության ուսումնասիրությունների իրականացմանը:</p>		

			Առաջիկայում նախատեսվում է Բանկի աջակցությամբ մեկնարկել ջրամբարի կառուցման իրագործելիության ուսումնասիրությունները:		
		83.13.Շիրակի մարզում Արթիկի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	<p>ՀՀ Շիրակի մարզի Արթիկի ջրամբարի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները ավարտվել են, ներկայումս գտնվում են համալիր փորձաքննության փուլում:</p> <p>Հանրային ներդրումային կոմիտեի ս.թ. հոկտեմբերի 23-ին կայացած նիստում քննարկվել և հաստատվել է Արթիկի ջրամբարի ներդրումային ծրագիրը:</p>		
		83.14.Սյունիքի մարզում Խնձորեսկի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	<p>Գերմանիայի կառավարությունը ՀՀ կառավարությանն առաջարկում է երկկողմ պաշտոնական զարգացման աջակցության շրջանակում առկա վարկային պարտավորությունների փոխարկում՝ մինչև 23 միլիոն եվրոյի չափով: Պարտքի փոխարկումը կարող է տեղի ունենալ ի նպաստ կլիմայի, էներգետիկայի, արդար փոխակերպման, կենսակայուն տնտեսական զարգացման կամ բնական ռեսուրսների, կենսաբազմազանության պաշտպանության ոլորտներում ներկայացվելիք ծրագրերի: Այս համատեքստում, Ջրային կոմիտեն առաջարկել է Խնձորեսկի ջրամբարի նախագծման և կառուցման ծրագրային առաջարկը ներկայացնել որպես պարտքի փոխարկման գործիքի շրջանակում նախատեսվող համագործակցային ծրագիր:</p>		
		83.15. Սյունիքի մարզում Լիճքի (Մեղրի) ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	<p>Սյունիքի մարզի Լիճքի (Մեղրի) ջրամբարի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները ավարտվել են, ներկայումս գտնվում են համալիր փորձաքննության փուլում:</p> <p>Հանրային ներդրումային կոմիտեի ս.թ. հոկտեմբերի 23-ին կայացած նիստում քննարկվել և հաստատվել է Լիճքի ջրամբարի ներդրումային ծրագիրը:</p>		

		<p>83.16.Կապսի ջրամբարից մինչև Թալինի մայր ջրանցքի ոռոգման ջրատարի կառուցում</p>	<p>Ջրային կոմիտեի կողմից ՀՀ 2026-2028թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտով, որպես նոր նախաձեռնություն, ներկայացվել է, Կապսի ինքնահոս ջրատարի նախագծում և կառուցում միջոցառումը: ՀՀ կառավարության 05.06.2025 թվականի N741-Ն որոշմամբ գումարները նախատեսվել են սկսած 2027թվականից:</p>		
		<p>83.17.Հերհերի ջրամբարից սկիզբ առնող ինքնահոս համակարգի կառուցում</p>	<p>Հեր-Հերի ջրամբարից սկիզբ առնող ինքնահոս համակարգի կառուցման նպատակով դեռևս 2019 թվականին, ձեռք է բերել ՀՀ Վայոց ձորի մարզի Հեր-Հերի ջրամբարից ինքնահոս ջրատարի կառուցման նպատակով նախագծանախահաշվային փաստաթղթերը: Ծրագրի իրականացման նպատակահարմարության և արդյունավետության վերաբերյալ տեղի են ունեցել քննարկումներ, այդ թվում նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում, տեղում՝ Հեր-Հերի ջրամբարի տարածքում իրականացվել են ուսումնասիրություններ: ՀՀ վարչապետի համապատասխան հանձնարարականների հիման վրա՝ շահագրգիռ կողմերի քննարկումների արդյունքներով վերջնականացվել է Հեր-Հերի ջրամբարից ինքնահոս համակարգի կառուցման ծրագիրը: Ծրագիրը մշակվել է ՀՀ կառավարության 09.02.2023թ-ի N 175-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն: ՀՀ Վայոց ձորի մարզի «Հեր-Հերի ջրամբարից ինքնահոս համակարգի կառուցում» հանրային ներդրումային ծրագրի նախագծի լրամշակված տարբերակը 2025 թվականի հոկտեմբերի 29-ի N 01/15/5515-2025 գրությամբ ներկայացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ հաշվի առնելով Ֆինանսների նախարարության կողմից ներկայացված</p>		

			դիտարկումները: Նախագիծը ներկայումս գտնվում է ՀՀ ֆինանսների նախարարությունում՝ քննարկման փուլում, որը առաջիկայում կներկայացվի Հանրային ներդրումային կոմիտեի նիստի քննարկմանը:		
		83.18. Գեղարդալճի ջրամբարից ինքնահոս համակարգի կառուցում			
		83.19. Օրվա կարգավորիչ 31 հատ ջրավազանների կառուցում, վերակառուցում և նախապատրաստական աշխատանքների իրականացում	Համալիր փորձաքննության դրական եզրակացություն ստանալու նպատակով թվով 14 ՕԿԶ-երի ՆՆՓ-երն ուղարկվել է Քաղաքաշինության կոմիտե: 2025 թվականին պետական համալիր փորձաքննության դրական եզրակացություն են ստացել թվով 11 ՕԿԶ-ների ՆՆՓ-ներ, որոնցից 5-ի մասով շինարարական աշխատանքները մեկնարկել են և գտնվում են ավարտական փուլում, իսկ ևս 2 ՕԿԶ-ի մասով կապալի պայմանագրերը կնքված են 2026-ի առաջին եռամսյակում կմեկնարկեն շինարարական աշխատանքները: Եվս 2 ՕԿԶ-ների շինարարական աշխատանքների ձեռքբերման համար մշակված են տեխնիկական առաջադրանքները և առաջիկայում կմեկնարկեն մրցութային գործընթացները: Բացի դա ներկայումս տարբեր համայնքների հետ իրականացվում են աշխատանքներ պետական համալիր փորձաքննության ժամանակ տարբեր գերատեսչությունների կողմից բարձրացված խնդիրները կարգավորելու և դրական փորձաքննության եզրակացություններ ստանալու նպատակով:		
		83.20. Արագածոտնի մարզում Գառնահովիտի ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական	Գառնահովիտի ջրամբարի իրագործելիության ուսումնասիրության խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման համար, Ասիական զարգացման բանկի կողմից հայտարարված մրցույթի		

		<p>հիմնավորման ուսումնասիրություն և նախագծային փաստաթղթերի կազմում</p>	<p>արդյունքում, ուսումնասիրություններն իրականացվում են «Հիդրոսոլուշնս» ՍՊԸ և «AFRY Switzerland Ltd.» (այսուհետ՝ Խորհրդատու) համատեղ կոնսորցիումի կողմից:</p> <p>Խորհրդատվական ծառայությունների մատուցման աշխատանքներն ընթացքի մեջ են: Ասիական զարգացման բանկի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն, Ելակետային տվյալների ձեռքբերման դժվարություններով, ինչպես նաև ուսումնասիրությունների ընթացքում առաջ եկած որոշ խնդիրներով պայմանավորված՝ ծառայությունների մատուցման համար Խորհրդատուի հետ կնքված պայմանագրի ժամկետը երկարացվել է մինչև 2026 թվականի ապրիլի 1-ը:</p>		
		<p>83.21. Տավուշի մարզում Կարմիր գյուղի ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություն և նախագծային փաստաթղթերի կազմում</p>	<p>Կարմիր գյուղի ջրամբարի իրագործելիության ուսումնասիրության խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման համար, Ասիական զարգացման բանկի կողմից հայտարարված մրցույթի արդյունքում, ուսումնասիրություններն իրականացվում են «Հիդրոսոլուշնս» ՍՊԸ և «AFRY Switzerland Ltd.» (այսուհետ՝ Խորհրդատու) համատեղ կոնսորցիումի կողմից:</p> <p>Խորհրդատվական ծառայությունների մատուցման աշխատանքներն ընթացքի մեջ են: Ասիական զարգացման բանկի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն, Ելակետային տվյալների ձեռքբերման դժվարություններով, ինչպես նաև ուսումնասիրությունների ընթացքում առաջ եկած որոշ խնդիրներով պայմանավորված՝ ծառայությունների մատուցման համար Խորհրդատուի հետ կնքված պայմանագրի ժամկետը երկարացվել է մինչև 2026 թվականի ապրիլի 1-ը:</p>		

		<p>83.22. Լոռու մարզում Գետիկի ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություն և նախագծային փաստաթղթերի կազմում</p>	<p>Գետիկի ջրամբարի իրագործելիության ուսումնասիրության խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման համար, Ասիական զարգացման բանկի կողմից հայտարարված մրցույթի արդյունքում, ուսումնասիրություններն իրականացվում են «Հիդրոսոլուշնս» ՍՊԸ և «AFRY Switzerland Ltd.» (այսուհետ՝ Խորհրդատու) համատեղ կոնսորցիումի կողմից:</p> <p>Խորհրդատվական ծառայությունների մատուցման աշխատանքներն ընթացքի մեջ են:</p> <p>Ասիական զարգացման բանկի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն, Ելակետային տվյալների ձեռքբերման դժվարություններով, ինչպես նաև ուսումնասիրությունների ընթացքում առաջ եկած որոշ խնդիրներով պայմանավորված՝ ծառայությունների մատուցման համար Խորհրդատուի հետ կնքված պայմանագրի ժամկետը երկարացվել է մինչև 2026 թվականի ապրիլի 1-ը:</p>		
84	<p>«Արփա-Սևան» թունելի անվտանգ շահագործման շարունակականության ապահովում</p>	<p>84.1. Արփա-Սևան հիդրոտեխնիկական կառուցցի վթարային հատվածների ուսումնասիրություն, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և շինարարական աշխատանքների իրականացում</p>	<p>2024-2025 թվականներին նախատեսված ընդհանուր 244.7 մ երկարությամբ առավել վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքները ավարտվել են:</p> <p>2025 թվականին ձեռք են բերվել նախագծանախահաշվային փաստաթղթեր, որոնք անցել են պարզ փորձաքննություն և ներկայացվել են համալիր փորձաքննության: Ձեռք բերված նախագծանախահաշվային փաստաթղթերով 2026-2027 թվականներին կմեկնարկեն հիմնանորոգման շինարարական աշխատանքները:</p>		

85	Խոնավ (գերխոնավ) գյուղատնտեսական հողատարածքների մելիորատիվ վիճակի բարելավման աշխատանքների իրականացում	85.1.Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում: Գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքների իրականացում	<p>« 2025 թվականի պետական բյուջեի «Կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանում և շահագործում» ծրագրի շրջանակներում իրականացվել են կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, վերականգնման և նորոգման շուրջ 175.5 կմ երկարությամբ աշխատանքներ, իսկ խնայված միջոցների հաշվին՝ ևս շուրջ 43.7կմ: Արարատյան դաշտում տեղադրված 455 դիտողական հորատանցքներում իրականացվել են գրունտային ջրերի մշտական դիտարկումներ:</p>		
86	Հեղեղման ռիսկի նախնական գնահատման իրականացում, հեղեղումների վտանգի և ռիսկի քարտեզների կազմում, հեղեղումների ռիսկի կառավարման պլանների կազմում	86.1.Հանրապետության բնակավայրերի, տնտեսական արժեք ներկայացնող տարածքների ու բնակչության գույքը վարարումների և սելավների ռիսկից պաշտպանելու տվյալների բազայի ստեղծման, հակահեղեղային առաջնահերթ միջոցառումների իրականացման կանոնակարգման, կառավարման համակարգչային ծրագրի միջոցով ոլորտի կենտրոնացված կառավարման իրականացում	<p>Ավարտվել են « Ծիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրիկ և Առափի բնակավայրերի Ախուրյան գետի հունի մաքրման աշխատանքները: Ընթացքի մեջ են « Ծիրակի մարզի Արթիկ-Նոր Կյանք համայնքների հեղեղատարի վերին տեղամասի մաքրման և կարգավորման շինարարական աշխատանքները: Ավարտվել են 3 աշխատանքների՝ « Արագածոտնի մարզում Ռիա-Թագա համայնքի երկու հեղեղատարների մաքրման և կարգավորման, « Արմավիրի մարզում Մեծամոր գետի 250 մ երկարությամբ ավապատնեշի բարձրացման և Մեծամոր գետի 620 մ ընդհանուր երկարությամբ հատվածներում հունի մաքրման, « Ծիրակի մարզի Վարդաքար համայնքի բետոնապատ հեղեղատարի մաքրման և կարգավորման աշխատանքներ, Նոր Կյանք համայնքի հեղեղատարի մաքրման և կարգավորման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման գործընթացները: Ընթանում են « Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Արծիս, Այրում և Հաղթանակ բնակավայրերի տարածքում Դեբեդ գետի հունի մաքրման</p>		

			<p>աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման գործընթացը:</p> <p>ՀՀ Արարատի մարզի Արաքսավան և Բուրաստան համայնքների Արաքս գետի N 16-ից մինչև N 14 սահմանների միջակայքում Արաքս գետի նախկին հունի վերականգնման և N 16 սահմանանշանի մոտակայքում Արաքս գետի հայկական կողմի մոտ 130 մետր երկարությամբ և 8 մետր խորությամբ ողողված պատնեշի վերականգնման աշխատանքների նախագծային փաթեթները Թուրքական կողմի հետ համաձայնեցման փուլում են:</p>		
87	Ոռոգման համակարգերում գույքի առկայության և վիճակի գնահատում	87.1. Իրականացնել ոռոգման համակարգերի (ջրանցքներ, ջրամբարներ, խորքային հորեր, ջրատար խողովակներ, պոմպակայաններ, շենքեր, շինություններ, մեքենամեխանիզմներ, հիդրոտեխնիկական այլ կառուցվածքներ և այլն) գույքագրում և գնահատում	<p>«Ոռոգվող գյուղատնտեսության զարգացումը Արարատի և Արմավիրի մարզերում» ծրագրի Ջրային բաղադրիչով նախատեսված է իրականացնել պետական սեփականություն հանդիսացող ոռոգման համակարգերի չափագրության, քարտեզագրման, տեխնիկական գնահատման և վերականգնման կարիքների գնահատման աշխատանքներ: Մրցույթի արդյունքում ընտրված «ԱՄՊԵՐԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայումս իրականացվում են ՀՏԿ-ների քարտեզագրման, չափագրման և դրանց փաստացի վիճակի գնահատման աշխատանքներ:</p>		
88	Գործող ջրամբարների պատշաճ շահագործում	88.1.Ջրամբարների վերականգնման և վերազինման աշխատանքներ	<p>Ընթացքի մեջ են Սառնաղբյուր, Այգեձոր, Սևաբերդ ջրամբարների վերականգնման համար նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները:</p> <p>Այգեձորի ջրամբարի մասով իրականացված գնման ընթացակարգի արդյունքում ձեռք են բերվել նախագծանախահաշվային փաստաթղթեր, միաժամանակ ուսումնասիրության արդյունքներից</p>		

			<p>պարզվել է, որ առկա է նաև պատվարի վերանորոգման խնդիր, որի լուծման նպատակով 2026 թվականին նոր նախագծի ձեռք բերման համար անհրաժեշտ կլինի իրականացնել գնման ընթացակարգ:</p>		
		<p>88.2.Յուրաքանչյուր ջրամբարի տեխնիկական անվտանգության ապահովման ծրագրի մշակում</p>	<p>Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի կողմից իրականացվել են.</p> <ul style="list-style-type: none"> <li>- ՀՀ Տավուշի մարզի Այգեձորի ջրամբարի տեխնիկական վիճակի ուսումնասիրություններ,</li> <li>- ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուրի ջրամբարի պատվարի անվտանգ շահագործման նպատակով՝ հիդրոտեխնիկական կառուցվածքներում ընթացող պրոցեսների վտանգավորության աստիճանը պարզելու ուսումնասիրություններ:</li> </ul>		